



With the support of the
Erasmus+ Programme
of the European Union



CHED – Շախմատի Հարթակ Խուլերի Համար

ՔԱՂՎԱԾՔ (ԱՄՓՈՓՈՒՄ)



ԱՄՓՈՓՈՒՄ

CHEd- «Շախմատի հարթակ խուլերի համար» կոլեկտիվ համագործակցության նախագիծ է, համաֆինանսավորված Եվրոպական Միության Էրասմուս+ Ծրագրով: Նախագծի նպատակն է ավելացնել Խուլ մարդկանց ներգրավվածությունը շախմատի ասպարեզում: Ծրագրի շրջանակներում մշակվելու է ինտերակտիվ շախմատի հարթակ: Օգտագործվելու է ժեստերի լեզուն, շախմատի աշխարհում սոցիալական ներառություն և ինքնավստահություն տարածելու համար:

CHEd-ը համաեվրոպական նախագիծ է, որը իրագործվում է 8 Եվրոպական կազմակերպության կողմից: Նախագիծը համակարգում է Institutul Postliceal “Phoenix” համալսարանը, որը գտնվում է Ռումինիայում, Clubul Sportival Surzilor ‘Tacerea’ Cluj կազմակերպության աջակցությամբ, որը նույնպես գտնվում է Ռումինիայում, համատեղ Antik Art LLC – IT Solution, Center of Communication & Technology (KET), Landward Research Teoranta, CEIPES, RES-GEST և Sinop Spastic Children Association. Վերոնշյալ կազմակերպությունները հետևյալ երկրներից են՝ Հայաստան, Հունաստան, Իռլանդիա, Իտալիա, Լեհաստան և Թուրքիա:

Որպես նախագծի մի մաս, իրականացվեց առցանց հարցում, Խուլերի համայնքի պահանջները ավելի լավ հասկանալու նպատակով: 8 երկրներից հավաքագրվեց 156 պատասխան: Պատասխանները տրամադրված էին երեք հիմնական խմբերի ներկայացուցիչների կողմից՝ բացարձակ չլսող (53.8%), դժվարությամբ լսող (29.5%), բացարձակ լսող (16.7%):

Հարցման մասնակիցների գերակշռող մասը Խուլերի Համայնքի անդամներ են և/կամ անհատներ որոնք ներգրավված են շախմատի կամ սպորտի ասպարեզում: Մասնակիցներին խնդրել են նշել իրենց կարծիքը այն մասին, թե արդյոք կան խոչընդոտներ, որոնք սահմանափակում են չլսող կամ դժվարությամբ լսող մարդկանց հասանելիությունը սպորտին: Նմանատիպ հարց էր տրված նաև շախմատի հասանելիության վերաբերյալ: Մասնակիցների 72.3% և 58.0% հաստատել էին, որ և՛ սպորտի և՛ շախմատի հասանելիության հարցում առկա են խոչընդոտներ:

Հետագա ուսումնասիրությունը նպատակ ուներ բացահայտելու վերոհիշյալ սահմանափակումների բնույթը: Մի քանի խոչընդոտներ ընտրված էին հարցաշարում տրամադրված տարբերակներից, մյուսներն էլ՝ անհատական լրացումներից: Ինչ վերաբերում է մարզական գործունեության մեջ խուլերի մասնակցության սահմանափակող գործոններին, սովորելու հնարավորության բացակայությունն առավելագույն սահմանափակող տարրն է: Բացի այդ, սարքավորումների սակավությունը և անբավարար մատչելիությունը յուրաքանչյուր մասնակից երկրի կողմից ընտրվեց առավել սահմանափակող 3 տարրերից մեկը: Հետաքրքիր է, որ շախմատին խուլերի

հասանելիության հարցում՝ սովորելու անբավարար հնարավորությունները նույնպես առավելագույն նշված խոչընդոտներից էր:

Այսպիսով, կարող ենք ծանոթանալ հարցաշարի արդյունքում բացահայտված գլխավոր խնդիրներին՝

- Խուլերի մարզական գործունեության և սպորտի հասանելիության երեք հիմնական խոչընդոտներն են՝ սարքավորումներ (25,4%), գումար (23,7%) և սովորելու հնարավորություն (23,3%);
- Խուլ մարդկանց սպորտի հասանելիության խոչընդոտները հաղթահարելու համար նշված առավելագույն երեք տարբերակներն էին՝ ավելի մեծ աջակցություն (25,0%), ավելի շատ ֆինանսավորում (18,8%) և դասաժամերի ավելացում (18,1%);
- Խուլերի շախմատի հասանելիության երեք հիմնական խոչընդոտներն են՝ շախմատ սովորելու հնարավորություն (36,6%), գումար (20,4%) և առկա շախմատի խմբակներ (20,4%);
- Շախմատային գործունեության այս խոչընդոտները հաղթահարելու երեք ամենատարածված լուծումներն էին՝ դասաժամերի ավելացում (18,6%), շախմատային խմբակների ավելացում (16,0%) և մատչելիություն (14,7%);
- Մասնակիցների 32.8% -ը նախկինում ստացել էր առցանց ուսուցում;
- Մասնակիցների 45.5% -ը նշել է, որ այդ դասընթացը թարգմանված է եղել ժեստերի լեզվով, մինչդեռ 32.7% -ը նշել է, որ ժեստերի լեզվի թարգմանությունը չի տրամադրվել;
- Մասնակիցների 31.4% -ը նշել է, որ առցանց դասընթացը բավական պարզ և մատչելի է եղել, նույնիսկ եթե թարգմանված չէր ժեստերի լեզվով;
- Մասնակիցների 32.7% -ը նշել է, որ տրամադրված ժեստերի լեզվով թարգմանությունը եղել է կամ ոչ պարզ կամ այլ երկրի ժեստերի լեզվով;
- Մասնակիցների 6.8% -ը նշել է, որ առցանց դասընթացը ճիշտ տևողություն է ունեցել, 6.1% -ը այն համարել է չափազանց երկար և 6.1% -ը՝ չափազանց կարճ:

Համակարգող և գործընկեր կազմակերպությունները յուրաքանչյուրը կազմել են ազգային զեկույց: Զեկույցները ամփոփում են մասնակից երկրներում ժեստերի լեզվի պատմությունը, ինչպես նաև սպորտին խուլերի հասանելիության մասին օրենքներն ու կանոնակարգերը: Landward Research Teoranta- ն պատրաստեց լրացուցիչ եվրոպական զեկույց: Զեկույցը պարունակում է Եվրոպայում Խուլերի Համայնքի պատմության համապարփակ նկարագրություն:

Պատմության ընթացքում նրանք, ովքեր տարբերվել են «նորմայից», ենթարկվել են տարանջատման: Խուլերի համայնքը բացառություն չէ: Եվրոպայում խուլ մարդկանց կրթելու առաջին փորձը տեղի է ունեցել 1500 թվականին՝ Իսպանիայում: Խուլերի համար մասնագիտացված դպրոցների հիմնումը տեղի է ունեցել 1800-ականներին: Որոշ երկրներ, ինչպիսիք են Հունաստանը, Թուրքիան և Հայաստանը՝ սկսեցին 1800-ականների վերջին / 1900-ականների սկզբին:

Խուլերի կրթության հարցում ներդրումների բացակայության հետ միաժամանակ 1880 թ.-ին Միլանում հետընթաց տեղի ունեցավ նաև խուլերի և լսողների իրավահավասարության հարցում: Այդ ընթացքում տեղի ունեցավ Խուլերի կրթության հիմնահարցերի մասին երկրորդ միջազգային համագումարը: 163 Խուլ ուսուցիչներ ներկայացել էին այդ համագումարին, որտեղ հաստատվեց «հողավորման անառարկելի գերազանցությունը նշանների նկատմամբ»: Արդյունքում, խուլ ուսանողներին կրթելու համար ժեստերի լեզվի օգտագործումը արգելվեց՝ ծնելով բանավոր խոսքի դարաշրջանը:

Ակնհայտ է, որ պատմության ընթացքում խուլ մարդկանց համար սահմանափակ է եղել կրթության և նույնիսկ հաղորդակցության հասանելիությունը: CHED-ի միջոցով իրականացված հետազոտությունը նպատակ ուներ գնահատելու, թե արդյոք դեռ կան սոցիալական խնդիրներ որոնք խոչընդոտում են խուլերի համայնքի հասանելիությանը սպորտին:

Ժեստերի լեզվի տարածման հետևանքով, մոտավորապես Միլանի համագումարից 80 տարի անց, դրական շարժ նկատվեց խուլերի և լսողների իրավահավասարության հարցում: CHED-ի հետազոտությունը թույլ է տալիս գնահատել խուլերի եվրոպական համայնքի կարիքները՝ հաշվի առնելով ազգային առանձնահատկությունները, ինչպես նաև տարանջատել ոլորտները, որտեղ անհրաժեշտ է փոփոխություններ կատարել: Բացահայտված հիմնահարցերը հետևյալն են՝ համապատասխան ֆինանսավորումը և կազմակերպչական ենթակառուցվածքների կարևորությունը: Ընդգծվում է, որ ԵՄ որոշ երկրներում, ինչպիսին է Ռումինիան, խուլերի սպորտի ազգային ասոցիացիա գոյություն չունի: Նման մանրամասների շեշտադրումը հնարավորություն է տալիս մտորելու ներկա համակարգի և օրենսդրության մասին: Իր հերթին, սա հնարավորություն է տալիս զարգացնել այլ հարթակներ, ինչպիսին է CHED-ը, ինչը կարող է նպաստել խուլ և լսողական խնդիրներ ունեցող մարդկանց ներառականությանը:



"The European Commission's support for the production of this publication does not constitute an endorsement of the contents, which reflect the views only of the authors, and the Commission cannot be held responsible for any use which may be made of the information contained therein."